ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ

# ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԵՐԳԻՉ ՎԱՂԱՐՇԱԿ ԷԼԻԲԵԿՅԱՆԸ

*Այսպես է անվանել Վաղարշակ Էլիբեկյանին վրացի նշանավոր գեղանկարիչ, Խորհրդային Միության ժողովրդական նկարիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս Լադո Գուդիաշվիլին: (Նշենք, որ Լադո Գուդիաշվիլին վրացիների Մարտիրոս Սարյանն է): Ծանոթանալով Էլիբեկյանի գործերին, նա ասել է. «Նկարչի գունագեղ գեղանկար-մանրանկարները թախծոտ վերհուշ են հին, անցնող Թիֆլիսի մասին: Այդ կտավները ստեղծված են բնիկ թբիլիսցու սիրով, որոնք մեր հիշողության մեջ վերականգնում են մանկության ու պատանեկության մեր քաղաքը»:*



Վաղարշակ Էլիբեկյանը երեւույթ է հայ գեղանկարչության պատմության մեջ: Նկարելու ծիրքը նրա մեջ ի ծնե է եղել: Նա ավարտել է Թիֆլիսի «Հայարտան» նկարչական ստուդիան` ճանաչված նկարիչ Գիգո Շարբաբչյանի ղեկավարությամբ: Սակայն ճակատագիրը նրա համար այլ բան էր նախատեսել: Տակավին 1936 թվականին, 26 տարեկան Վաղարշակ Էլիբեկյանը նշանակվում է Թիֆլիսի պատանի հանդիսատեսի թատրոնի տնօրեն: Նա սիրով համաձայնվում է, հույս ունենալով, որ թատրոնում կշարունակի նկարչական գործունեությունը: Բայց տնօրենի աշխատանքը նրանից այնքան ժամանակ է խլում, որ ոչ միայն նկարելու, այլեւ ընտանիքով զբաղվելու ժամանակ չէր մնում: Արդյունքում, նկարչությունը նրա մեջ «քուն է մտնում»: Բայց, բարեբախտաբար, ոչ այնքան խոր, քանզի թատրոններում (մի քանի տարի անց Էլիբեկյանը նշանակվում է այն ժամանակ Ստեփան Շահումյանի անունը կրող, այսօր` Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական) թատրոնի տնօրեն) աշխատելու տարիներին Վաղարշակ Էլիբեկյանը ձեւավորել է երկու տասնյակից ավելի ներկայացում եւ ամեն մի նոր պրեմիերայից հետո` թե' գործընկերները, թե' քննադատները պնդում էին, որ Վաղարշակ Էլիբեկյանի կոչումը, այն էլ ի վերուստ տրված, նկարչությունն է: Միայն 1974 թվականին, անցնելով կենսաթոշակի, սկսեց զբաղվել նկարչությամբ: Շատ դժվար է բացատրել ներքին աշխարհի ուշ արթնացումը, երբ նա թատերական ասպարեզում արդեն կերտել էր իր կենսագրությունը:

Ու սկսեց Վաղարշակ Էլիբեկյանը նկարել: Առիթը անհավատալիորեն պարզունակ էր... պարապությունը: Նրա կինը` Ֆլորա Երվանդովնան, մի շաբաթով մեկնել էր Երեւան, որտեղ արդեն ապրում էին նրանց նկարիչ տղաները` Ռոբերտն ու Հենրին, եւ դուստրը` Լուիզան: Ողջ կյանքում օրական 20 ժամ աշխատած մարդը պարապությունից տեղը չէր գտնում: Նա չէր կարողանում ժամանակը հենց այնպես «սպանել»: Ահա թե ինչու, մի օր գնաց նկարչական պիտույքների խանութ, գնեց ներկեր ու վրձիններ, ստվարաթուղթ: Մի խոսքով, այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նկարելու համար: Եվ մինչեւ կնոջ վերադարձը, նա արդեն նկարել էր 4-5 կտավ: Քիչ է ասել` նկարել էր: Նա ուղղակի կտավի վրա վերարտադրել էր իր մանկության քաղաքը, հին Թիֆլիսը` իր նեղլիկ փողոցներով, գունագեղ դուքաններով եւ, իհարկե, կինտոներով:

Երբ Ֆլորա Երվանդովնան վերադարձավ տուն, Վաղարշակը նրան ցույց տվեց իր «պարապ վախտի խաղալիքները», նախօրոք խնդրելով իր «վայրիվերումների» մասին ոչ-ոքի չասել: Կինը խոստացավ: Բայց երբ տեսավ ամուսնու նկարածները, մոռացավ իր «ազնիվ խոսքը»: Հենց հաջորդ օրը, երբ ամուսինն ինչ-որ գործով տանից դուրս էր եկել, «ուխտադրուժ» տիկին Ֆլորան հեռաձայնեց Երեւան` Հենրիին եւ Ռոբերտին ու պատմեց ամեն ինչ: Հաջորդ օրը առավոտյան Հենրին արդեն Թբիլիսիում էր եւ... նա չի կարողանում թաքցնել իր հիացմունքը: Նկարիչ որդու գնահատականը երեւի կանխորոշեց Վաղարշակ Էլիբեկյան նկարչի ապագան: Բայց հանուն արդարության, պետք է ասել, որ նրա գործերի առաջին գնահատողը եղավ Ֆլորա Երվանդովնան: Այդպիսին նա մնաց ողջ կյանքում: Այդ բարի կինը հրեշտակ էր ոչ միայն ամուսնու, այլ նաեւ արդեն որոշակի հաջողությունների հասած նկարիչ որդիների համար, ովքեր ամենայն լրջությամբ էին ընդունում մոր դիտողությունները:

Եվ այսպես, տեւական քնից հետո Վաղարշակ Էլիբեկյանի մեջ արթնացավ նկարիչը, արթնացավ այն ժամանակ, երբ նա թատերական ասպարեզում վաղուց կերտել էր իր մնայուն «կենսաագրությունը»:



Վաղարշակ Էլիբեկյանը տղաների` Հենրիի, Ռոբերտի եւ թոռների հետ
Երեւան, 1978 թ.

Ու սկսեց Էլիբեկյանը նկարել, նկարել իր մանկությունը: Հին Թիֆլիսն էր նրա գլխավոր թեման: Չնայած այն հանգամանքին, որ Թիֆլիսը բազմազգ քաղաք էր, Էլիբեկյանի մանկության Թիֆլիսը շատ է հայկական, այո': Հենց հայկական: Նա Վրաստանի մայրաքաղաքը նկարում է այնպես, ինչպես տեսել է մանկության ու պատանեկության տարիներին: Դժվար գործ էր ձեռնարկել նկարիչը: Չէ՞որ Թբիլիսին այսօր ժամանակակից մեծ քաղաք է` լայնահուն պողոտաներով, բոլոր տեսակի իր սպորտային միջոցներով, երկնաքերերով: Եվ նա պետք է «բարձրացներ» այդ քաղաքի վարագույրը ու տեսներ հինը` իր մանկության քաղաքը: Նա կարողացել է կատարել իր խնդիրը եւ հասնել նրան, որ նրա կտավներով այսօր կարելի է դատել հին Թիֆլիսի մասին, քաղաքի, որը մոտ է շատերի սրտին: Իսկ դա այնքան էլ հեշտ գործ չէր: 20-րդ դարում այստեղ ծնվել եւ որպես նկարիչ կայացել են Գեւորգ Բաշինջաղյանը, Կարապետ Գրիգորենցը, Երվանդ Քոչարը, Գեւորգ Յակուլովը, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Գեւորգ Գրիգորյանը (Ջոտտոն), Հովսեփ Կարալյանը: Եվ նրանց կողքին սկսում են հիշատակել նաեւ Վաղարշակ Էլիբեկյանին, ուր նույն հողի ու ջրի ծնունդ էր եւ իրավմամբ իր ուրույն տեղն է զբաղեցրել թիֆլիսահայ նկարիչների այս անդաստանում:

Վաղարշակ Էլիբեկյանի մուտքը հայ կերպարվեստ շռնդալից էր: Արդեն երկու տարի անց` 1976 թվականին, նա երկու անհատական ցուցահանդես ունեցավ Երեւանում, մեկն էլ` Թբիլիսիում: Հենց այդ ժամանակ էլ Լադո Գուդիաշվիլին Վաղարշակ Էլիբեկյանին կոչել է «Հին Թիֆլիսի երգիչ»: Վաղարշակ Էլիբեկյանի` նկարչություն մուտք գործելու հետ ամբողջացավ Էլիբեկյանների նկարչական գերդաստանը: Այո, հենց այդպես: Սովորաբար գերդաստանի սկիզբը դնում է ծնողը: Էլիբեկյանների պարագայում ստացվեց ուղիղ հակառակը, քանզի Վաղարշակի որդիները` Հենրին վաստակավոր գործիչ եւ Ռոբերտը` ժողովրդական նկարիչ, արդեն իսկ անուն հանած նկարիչներ էին: Շուտով տարբեր քաղաքներում` Վիլնյուսում, Մոսկվայում, Գերմանիայում, Վիսբադենում կազմակերպվում են Էլիբեկյանների երեք համատեղ անհատական ցուցահանդեսները: Այնուհետեւ, Վաղարշակ Էլիբեկյանի գործերը ցուցադրվում են Խորհրդային Միության տարբեր քաղաքներում, ինչպես նաեւ` Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Գերմանիայում եւ այլուր:

Վաղարշակ Էլիբեկյանի մասին մեր պատումը թերի կլիներ, եթե չասեինք, որ այսօր իրենց պապի ու հայրերի կողքին են կանգնած Հենրիի եւ Ռոբերտի տղաները` Վաղարշակ-կրտսերը, Արեգը եւ Երվանդը:

Վաղարշակ Էլիբեկյանի եւ նրա որդիների գործերը քանիցս ցուցադրվել են տարբեր երկրներում: Բայց, որ նկարիչների այդ գերդաստանի երեք սերունդների գործերը ցուցադրվեին մի վայրում, մեկ հարկի տակ, դեռ չէր եղել: Այդ բացը լրացվեց մեկ տարի առաջ, երբ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում կազմակերպվեց նման մի ցուցահանդես, որը, ինչ խոսք, դարձավ երեւույթ մեր մշակութային կյանքում եւ ուրախություն պատճառեց հազարավոր արվեստասերների:

Պատկերը լրացնելու համար նշեմ, որ Թբիլիսիի Ջերժինսկու (ներկայիս` Ինգորոդվայի) փողոցում Էլիբեկյանների հետ ապրում էինք մի տան մեջ, հայ արձակագիրներ Կորյուն Ազրոյանի եւ Բենիկ Սեյրանյանի հարեւանությամբ: Ավելին, այդ շենքի առաջին հարկում էր գտնվում այն ժամանակվա «Սովետական Վրաստան» թերթի խմբագրությունը:

2020 թվականի օգոստոսի 10-ին լրանում է Վաղարշակ Էլիբեկյանի ծննդյան 110-ամյակը: Թող իմ այս գողտրիկ մանրապատումը լինի իմ հարգանքի տուրքը Մեծ թբիլիսցուն, հայ գեղանկարչության երեւելի ներկայացուցիչներից մեկին, մի մարդու, ում ճանաչել ու սիրել եմ մանկուց:

***ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ***
***«Սովետական Վրաստան» թերթի նախկին թղթակից, «Արմենպրես» գործակալության թղթակից***

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՇՈՒՐՋ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎ 890 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԹՈՇԱԿԱՅԻՆ ԱԿՏԻՎ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, 2019 թվականի հունվարի 1-ից Վրաստանում ներդրվեց կուտակային կենսաթոշակային համակարգը:*

Կենսաթոշակային նոր համակարգը մասամբ պարտադիր է, այսինքն, այն ուժի մեջ է միայն այն մարդկանց համար, ովքեր դեռ 40 տարեկան չկան, մնացածները ընտրության իրավունք ունեն: Ըստ մշակված սխեմայի` տարեկան 24 հազար լարիից պակաս անվանական եկամուտի դեպքում, քաղաքացու կենսաթոշակային հաշվին կփոխանցվի նրա աշխատավարձի գումարի 6 տոկոսը, Այդ տոկոսներից 2 տոկոսը քաղաքացին ինքն է վճարում, 2 տոկոսը` նրա գործատուն եւ եւս 2 տոկոսը` պետությունը: Տարեկան 24 հազարից 60 հազար լարիի աշխատավարձի դեպքում` պետության փայաբաժինը նվազում է եւ կազմում ընդամենը 1 տոկոսը:

Նշենք, որ կուտակված գումարները կենսաթոշակառուներին կվերադարձվեն տոկոսով` տարեկան միջին հաշվով 7 տոկոսի չափով: Ավելացնենք, որ քաղաքացիներին վերապահվում է կուտակային կենսաթոշակային համակարգից դուրս գալու իրավունք (օրինակ` ընթացիկ տարվա հունիսի տվյալներով, սույն համակարգից դուրս է եկել գրանցվածների ընդհանուր թվի 10 տոկոսը):

Կենսաթոշակային գործակալության ներկայացրած տեղեկատվության համաձայն, օգոստոսի 3-ի դրությամբ, թոշակային ակտիվները կազմել են 890 միլիոն լարի, թոշակային ակտիվներին ավելացած տարեկան արդյունավետ շահույթը 11,4 տոկոս է, որ երկրում առկա տարեկան գնաճից երկու անգամ ավելի է (հուլիսի դրությամբ, ակտիվների արդյունավետ շահույթը կազմել է` 5,7 տոկոս): Թոշակային ակտիվներին ավելացած շահույթը կազմում է 68 միլիոն լարի:

Ինչ վերաբերում է կուտակային կենսաթոշակային համակարգում ընդգրկված քաղաքացիներին, ապա, հուլիսի 29-ի դրությամբ, Վրաստանի կուտակային կենսաթոշակային համակարգին միացել է 1 042 084 քաղաքացի:

Կենսաթոշակային գործակալության տվյալներով` կենսաթոշակային սխեմային մասնակցում է մինչեւ 40 տարեկան 260 298 եւ 40-ից ավելի 188 303 (ընդհանուր առմամբ` 448 601) կին եւ 40 տարեկանից ցածր 337 705 եւ 40 տարեկանից ավելի 255 483, ընդհանուր առմամբ 593 483 տղամարդ (նշենք, որ, վերջին մեկ ամսվա ընթացքում, համակարգում գրանցվածների թիվը կազմել է ավելի քան 9 հազար մարդ):




Անդրադառնալով թոշակային ակտիվներին, հարկ է նշել, որ մինչեւ վերադարձի պահը, այդ գումարների համար պատասխանատվություն ստանձնած պետությունը այդ գումարները կներդնի տարբեր նախագծերում եւ արժեթղթերում` Ազգային բանկի վերահսկողության ներքո: Այս գործընթացն իրականացվում է Կենսաթոշակային գործակալության ներքո գործող ներդրումային ծառայության կողմից:

2020 թվականի մարտին Գործակալությունը կենսաթոշակային խնայողությունների առաջին ներդրումն իրականացրել է 560 միլիոն լարի` ներդրումներ կատարելով Վրաստանում բարձր վարկանիշ ունեցող կոմերցիոն բանկերի ավանդային վկայագրերում:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-135

# ԽՈՆԱՐՀՈՒՄ ՄԵԾ ՔՆԱՐԵՐԳՈՒԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ




*Վահան Տերյանը հայ գրականության նոր շրջանի բանաստեղծներից է, որը մեր գրականությունը հարստացրեց նոր խոսքով, նոր լեզվով ու ճաշակով, գեղագիտական նոր մտածողությամբ:*

2020 թվականի հուլիսյան տոնակատարությունը, կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված, այս անգամ կրում էր համաշրջանային բնույթ: Տոնական օրը սկսվեց Գանձա գյուղի Սուրբ Կարապետ եկեղեցիներում (պատարագիչ՝ Տեր Գեւորգ քահանա Ասատրյան) հիշատակության Սուրբ եւ Անմահ Պատարագով: Այնուհետեւ տեղի ու հարակից գյուղերի բնակիչներն այցելեցին Վահան Տերյանի տուն-թանգարան, որտեղ այդ հաստատության գրական խմբակի աշակերտների ուժերով կազմակերպվեց պոեզիայի երեկո (ղեկավար՝ Լիզա Աբգարյան): Գրական-գեղարվեստական ցերեկույթներ կազմակերպվեցին նաեւ քաղաք Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախք» կրթամշակութային կենտրոնում (ղեկավար՝ Սաթիկ Սնխչյան), շրջանային գրադարանում (ղեկավար՝ Զարուհի Արզումանյան):

Տերյանական օրը նշվեց նույնպես երկրի մայրաքաղաքում: Վահան Տերյանի ծննդյան 135, մահվան 100 եւ Տերյանական պոեզիայի հիմնադրման 53-ամյա հոբելյաններին նվիրված յուրատեսակ ամփոփիչ առցանց գեղարվեստական երեկույթ հրամցրին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցուն կից Սուրբ Եղիա մարգարեի անվան կիրակնօրյա դպրոցի սաները: Գնահատելի է ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանի եւ սաների ջանքերը, որոնք ընկալումով, ճիշտ շեշտադրությամբ ու անկեղծ զգացումներով ունկնդրին փոխանցեցին Մեծ բանաստեղծի քնարական սրտամոտ, վառ պատկերավորությամբ ու երաժշտականությամբ հագեցած հոգեզմայլ տողերը

Մեր հայրենակիցը ծնվել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում: Ամեն տարի հուլիսի նախավերջին կիրակի օրը մարդաշատ է լինում նրա ծննդավայրը, որտեղ 1967 թվականից ի վեր անց է կացվում մեծ քնարերգուին նվիրված Տերյանական պոեզիայի օրը: Ավանդական տոնը, որը գրանցված է Վրաստանի մշակույթի նախարարության հանրապետական նշանակության տոների ցանկում, հոգեհարազատ է մեր երկրի պոեզիասեր հասարակությանը: Այդ պատճառով էլ միջոցառումը վաղուց ի վեր դարձել է հայ-վրաց մշակութային փոխառնչությունների եւս մի գործուն հարթակ: Նշենք նաեւ, որ տարբեր տարիներին Տերյանական օրվան իրենց մասնակցությունն են բերել հայ եւ վրաց հայտնի գրողներ Սիլվա Կապուտիկյանն ու Իոսեբ Նոնեշվիլին, Սերո Խանզադյանն ու Կառլո Կալաձեն, Վահագն Դավթյանն ու Գրիգոլ Աբաշիձեն, Գեւորգ Էմինն ու Մորիս Փոցխիշվիլին, Համո Սահյանն ու Խուտա Բերուլավան, Հրանտ Մաթեւոսյանն ու Ջանսուղ Չարկվիանին, Վարդգես Պետրոսյանն ու Մաղվալա Գոնաշվիլին, երկրի ղեկավարներից՝ Ջումբեր Պատիաշվիլին եւ, իհարկե, երկու երկրների պաշտոնյաներ, քաղաքական-հասարակական գործիչներ:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԻՆՉՊԵՍ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՆՍՏԵԼՈՒ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ԻՍԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

*Վրաստանի հանրային դպրոցներում եւ բուհերում ուսումնական տարին կսկսվի սեպտեմբերի 15-ին: Այդ մասին օգոստոսի 6-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացված միջգերատեսչական խորհրդի նիստի ավարտից հետո, լրագրողների հետ հանդիպմանը, հայտարարեց Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին: Նա, հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հետ, մանրամասնեց այն միջոցառումները, որոնք իրականացվելու են ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:*





Վրաստանի հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավարի հայտարարությամբ՝ ելնելով համավարակաբանական իրավիճակից, ուսումնական տարվա մեկնարկին ոչինչ չի սպառնում:

- Ուսումնական տարվա մեկնարկին կսկսվի մեծ շարժում, երբ աշակերտներն ու ուսանողները կհավաքվեն դպրոցներում եւ բուհերում: Թեպետ, այս անգամ, դասասենյակներում եւ լսարաններում ավանդական ոճը կփոխվի: Եթե նախկինում մի սենյակում նստում էր 20 հոգի, ապա հիմա այդպես չի լինի: Կմշակվի համապատասխան չափորոշիչ, թե երեխաներին ինչպես պետք է տեղավորել դասասենյակներում, իսկ ուսանողներին՝ լսարաններում, թե ինչպես են տարվելու հակահամաճարակային միջոցառումները՝ ձեռքերի լվանալը, դիմակների կրումը, դասամիջոցների կուտակումների կանխումը: Հարկ է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ փոքրահասակ երեխաներին խորհուրդ չի տրվում կրել դիմակներ: Այդ հարցով էլ հանձնարարականներ կմշակվեն: Մշակման փուլում են հանձնարարականները ինչպես դպրոցների, այնպես էլ՝ բուհերի համար: Կարծում եմ՝ համատեղ ջանքերով կկարողանանք կարգավորել երկրում համավարակաբանական իրավիճակը, թույլ չենք տա բարդացումներ,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:




ՆՈՐՈՒՅԹ

# TBC-Ի ՄՈԲԻԼԲԱՆԿԻՆ ՏՐՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

*Սպառողներին տրվող սպասարկումների դյուրացման նպատակով՝ TBC-ի մոբիլբանկին ավելացվել է կոմունալ հարկերի խմբավորման եւ միասին վճարման գործառույթ:*




Այսուհետեւ սպառողներին տրվել է հնարավորություն՝ առկա կամ նոր կոմունալ հարկերի խմբավորման եւ այդ ցանկալի խմբում ընդգրկվելու հնարավորություն: Դա հնարավորություն է տալիս, մեկ կոճակի սեղմամբ, իրականացնել վճարումները, ինչը սպառողներին թույլ կտա տնտեսել ժամանակը եւ է'լ ավելի դյուրացնել փոխանցումների իրականացումը:

Կոմունալ հարկերի խմբավորումը դյուրին գործընթաց է: Այդ գործառույթից օգտվելու եւ հարկերը վճարելու համար սպառողը պետք է.

* Փոխանցումների հարթակից ընտրի կոմունալ հարկերը:

* Նշի ձեւաչափերը, որոնց խմբավորումը ցանկանում է իրականացնել:

* Ձեւավորի խումբ, եւ այն կոչի ցանկալի անվամբ:

* Դյուրությամբ իրականացնել խմբավորված վճարումը:

Կոմունալ հարկերի խմբային գործառույթից, TBC-ի մոբիլբանկի հետ միասին, արդեն մի քանի ամիս է, ինչ կարող են օգտվել նաեւ Ինտերնետբանկից օգտվողները:

# TBC-Ի ԵՎ ՄԱՍՏԵՐՔԱՐՏԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՔԻՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*TBC-ի բանկի եւ Մաստերքարտի համատեղ նախաձեռնությամբ՝ սպառողները, ովքեր առաքիչ (Վոլտի) պատվերն իրականացնում են TBC-ի Մաստերքարտի ցանկացած քարտով, հնարավորություն ունեն քարտի վրա հետ ստանալ վճարված գումարի 20 տոկոսը:*

Ակցիայից կարող են օգտվել Թբիլիսիում եւ Բաթումիում: Առաքման ապլիկացիայում հատուկ պայմանների կիրարկումը տարածվում է սննդի բոլոր օբյեկտների վրա: Գումարը սպառողների քարտի վրա վերադարձվում է առավել քան հինգ աշխատանքային օրում:

Նախաձեռնության պայմանները չեն տարածվում TBC-ի աշակերտական թիվ 1 քարտի եւ ուսանողների՝ «Քո քարտը» քարտի վրա:




TBC-ի բանկի եւ Մաստերքարտի համատեղ առաջարկության մասին մանրամասն տեղեկատվությունը մատչելի է https://www.tbcbank.ge/web/ka/web/guest/tbc-mestercard-for-wolt-users կայքէջում:

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID-19-Ի ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ԴՐԱԿԱՆ ՄԻՏՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

*Հայաստանի կառավարությունը որոշել է փոփոխության ենթարկել Covid-19-ի հայտնաբերման մարտավարությունը: Այս մասին կառավարության օգոստոսի 6-ի նիստում հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*



- Մենք ունենք որոշակի վստահություն, որ կորոնավիրուսի դեպքերի հայտնաբերելիությունը բարձրացել է: Եթե նախկինում նոր դրական դեպքերը հասնում էին օրվա հետազոտությունների 25-30 տոկոսի մակարդակի, հիմա տատանվում են 15 տոկոսի շրջանում: Հայտնաբերելիության էական աճ ունենք: Այսպիսով, մարտավարության որոշակի փոփոխության հնարավորություն ենք ստացել: Եթե նախկինում հոսքերը մեծ էին, եւ մենք պասսիվ սպասում էինք, որ մարդիկ գան, որպեսզի նմուշառում իրականացնենք, ապա հիմա առողջապահության նախարարությունն ինքն ավելի նախաձեռնող կլինի եւ ռիսկային որոշակի տեղերում մենք, սեփական նախաձեռնությամբ, ախտորոշումներ կիրականացնենք,- ասաց Փաշինյանը եւ հավելեց, որ նոր տիպի կորոնավիրուսի համաճարակի հետ կապված իրավիճակը շարունակվում է բարելավվել եւ հունիսի 4-ից հետո առաջին անգամ կորոնավիրուսով վարակված քաղաքացիների թիվը պակաս է 8000-ից: Վարչապետի խոսքով՝ համավարակի թվերի նվազումը քաղաքացիների մոտ ձեւավորել է այն կարծիքը, որ իրավիճակն այլեւս հաղթահարված է, սակայն դա ամենեւին այդպես չէ: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ վերջին շրջանում լավ ցուցանիշի գրանցումը պահպանելու համար, պետք է շարունակել ավելի խիստ պահպանել կանոնները:

Վարչապետը նշեց, որ դա այն ձեւը կլինի, որը հնարավորություն կտա հաղթահարել համաճարակը:

# ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

## ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԿՄԵՂՄԱՑՎԵՆ

*Հայաստանում արտակարգ դրությունը, որի ժամկետը լրանալու էր օգոստոսի 12-ին, երկարաձգվում է եւս մեկ ամսով: Այն կլինի վերջին երկարաձգումը: Այդ մասին պարետատան նիստից հետո տեղի ունեցած ճեպազրույցում ասաց փոխվարչապետ, պարետ Տիգրան Ավինյանը:*

Նա ընդգծեց, որ մի շարք արգելքներ կմեղմացվեն:

- Մասնավորապես վերանայվելու է օտարերկրյա քաղաքացիների մուտքի հարցը, ապրանքների արտահանման սահմանափակումները, հանրահավաքներ անցկացնելու, հանրային միջոցառումների անցկացման հարցը,- ասաց նա՝ հավելելով, որ արտակարգ դրության երկարաձգման կամ արտակարգ իրավիճակի ռեժիմով համավարակի կառավարմանն անցնելու տարբերակները քննարկվում են:

Հիշեցնենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Հայաստանում անվերջ հնարավոր չէ արտակարգ դրության ժամկետը երկարաձգել, սակայն պետք է համապատասխան օրենքներում այնպիսի փոփոխություններ անել, որոնք հնարավորություն կտան համավարակի նոր օջախներ հայտնաբերելու դեպքում սահմանափակումներ կիրառել:

Արտակարգ դրության ռեժիմը՝ պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով, Հայաստանում հայտարարվել է մարտի 16-ից եւ երկարաձգվել մի քանի անգամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Օգոստոսի 7-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած հուժկու պայթյունի հետեւանքով ստեղծված իրավիճակը եւ լիբանանահայ համայնքի հետ կապված խնդիրները, քննարկեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ Պերճ Սեդրակյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում:*

Զրուցակիցներն անդրադարձան պայթյունի հետեւանքներին, մասնավորապես՝ լիբանանահայության կրած մարդկային եւ նյութական կորուստներին ու վնասներին, քննարկեցին լիբանանահայ համայնքին անհրաժեշտ հրատապ օգնության հարցը, միաժամանակ, նշելով, որ, հաշվի առնելով իրավիճակի բարդությունը եւ ճգնաժամային բնույթը, օժանդակությունը պետք է շարունակական լինի: Հայաստանի նախագահը եւ ՀԲԸՄ նախագահը կարեւորեցին համակարգված օգնության ծրագրերի իրականացումն ինչպես պետության, այնպես էլ՝ ազգային եւ եկեղեցական կառույցների կողմից:

Ըստ նախնական տվյալների՝ զոհերի թվում կան ազգությամբ 13 հայեր: Պայթյունից զգալիորեն տուժել են Բեյրութի հայկական թաղամասերն ու Անթիլիասի կաթողիկոսարանը:

Նշենք, որ Երեւանից օգոստոսի 8-ի երեկոյան տեղի կունենա առաջին թռիչքը Բեյրութ, որով Հայաստանի կառավարությունը 12 տոննա հումանիտար աջակցություն կուղարկի Լիբանանի կառավարությանը:

Լիբանանահայերին հրատապ օգնություն ցուցաբերելու համար՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից դրամական փոխանցումների համար՝ հատուկ հաշվեհամար է բացվել Կենտրոնական բանկում եւ առցանց դրամահավաքի հարթակ՝ հիմնադրամի կայքում:

# ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Կարեն Ավանեսյանը նշանակվել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման եւ ներգրավման վարչության պետ:*

Կարեն Ավանեսյանը 2019թ. դեկտեմբերի 30-ից զբաղեցնում էր Հայաստանի Վարչապետի աշխատակազմի՝ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի Եվրոպայի հայ համայնքի վարչության պետի պաշտոնը:

Հիշեցնենք, որ Հայաստանի վարչապետի որոշմամբ՝ հուլիսի 28-ին զբաղեցրած պաշտոններից ազատվել էին վարչապետի աշխատակազմի՝ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի տասը պաշտոնյաներ: Մասնավորապես զբաղեցրած պաշտոնից ազատվել էին գրասենյակի Եվրոպայի հայ համայնքների վարչության պետ Կարեն Ավանեսյանը, Եվրոպայի հայ համայնքների վարչության Արեւմտյան Եվրոպայի հայ համայնքների հետ կապերի բաժնի պետ Նատալյա Դանիելյանը, գրասենյակի Ամերիկայի հայ համայնքների վարչության Հարավային Ամերիկայի եւ Ավստրալիայի հայ համայնքների հետ կապերի բաժնի պետ Գոհար Սահակյանը, Սփյուռքի ներուժի հաշվառման եւ տեղեկատվական վերլուծությունների վարչության պետ Վաղինակ Վարդանյանը, Հայրենադարձության եւ հետազոտությունների վարչության պետ Գրիգոր Արշակյանը, Համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառույցների հետ կապերի վարչության համահայկական եւ միջազգային կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ Անահիտ Դավթյանը: Զբաղեցրած պաշտոնից ազատվել էին նաեւ հանձնակատարի գրասենյակի համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառույցների հետ կապերի վարչության պետ Քնարիկ Պետրոսյանը, Մերձավոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչության պետ Լեւոն Անտոնյանը, Մերձավոր սփյուռքի հետ կապերի վարչության պետ Տարոն Շագոյանը ու Հայրենադարձության եւ հետազոտությունների վարչության հետազոտությունների բաժնի պետ Էլիզ Գեւորգյանը:

Վարչապետի այլ որոշումներով՝ գրասենյակում կատարվել էին նաեւ վերանշանակումներ:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակից հայտնել էին, որ 10 պաշտոնյաների ազատումները պայմանավորված են կառուցվածքային փոփոխություններով:

### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

***Հուլիսի 31-ին, Հայաստանի ազգային ժողովի Հայաստան-ԱՄՆ բարեկամական խումբն ու ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հայկական հարցերի հանձնախումբը փոխըմբռնման հուշագիր կնքեցին՝ վերահաստատելով ԱՄՆ-Հայաստան գործընկերության ամրապնդման կարեւորությունը: Հուշագրի ստորագրման արարողությունը կայացավ հեռավար եղանակով՝ տեսակապի միջոցով:***

***Հայաստանի ազգային ժողովի կողմից ստորագրեց ԱԺ Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի ղեկավար Լիլիթ Մակունցը, իսկ Կոնգրեսի հայկական հարցերի հանձնախմբի անունից՝ Ֆրանկ Փալոնը: Հուշագիրը ստորագրվեց զուգահեռաբար երկու վայրերում՝ Երեւանում ԱՄՆ դեսպանությունում եւ՝ Վաշինգտոնում ՀՀ դեսպանությունում:***

### ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏՔԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

***Պետության պարտքը տնտեսավարող սուբյեկտներին, 2020 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, նվազել է 70 մլրդ դրամի շեմից՝ կազմելով 69,4 մլրդ դրամ: Ընդ որում, իրական գերավճարը (սահմանված կարգով հաշվարկվող հարկային պարտավորության գումարից ավելի վճարված գումար) կազմում է ընդամենը 6,6 մլրդ դրամ: Մնացած 62,8 մլրդ դրամը վերաբերում է ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի դեբետային գումարներին:***

***2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ այդ պարտքը կազմել է 274,1 մլրդ դրամ, իսկ 2019-ի հունվարի 1-ին՝ 169,2 մլրդ դրամ: Իսկ այդ տարեսկզբի դրությամբ՝ այն կազմել էր 79,6 մլրդ դրամ:***

### «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ՝ ԱՌՑԱՆՑ ՁԵՎԱՉԱՓՈՎ

***Մեկնարկեց Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական առցանց ծրագիրը: Այս տարի առաջին անգամ ծրագիրն անցկացվելու է առցանց:***

***Նշենք, որ Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, 2020 թվականի օգոստոսի 3-28-ը, սփյուռքի 12-18 տարեկան պատանիների եւ երիտասարդների համար 2 փուլով անց է կացնում «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական երկշաբաթյա առցանց ծրագիրը:***

***«Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական առցանց ծրագրին կմասնակցեն մինչեւ 250 սփյուռքահայ երիտասարդներ՝ աշխարհի 30 երկրից:***

***Ծրագիրն իրականացվում է «Դասավանդի՛ր, Հայաստան» (Teach for Armenia) կրթական հիմնադրամի հետ համատեղ: Ծրագրի գործընկերն է ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանը:***

### ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ԿԱՄՈՒՐՋ» ԾՐԱԳԻՐԸ

***Օգոստոսի 3-ին մեկնարկեց «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը:***

***«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրն ընդգրկում է երկու՝ ինկուբացիոն եւ աքսելերացիոն կրթական բաղադրիչներ, որոնց նպատակն է հայ մասնակիցների համար ստեղծել հնարավորություններ՝ միջազգային գործակցության հմտությունների յուրացման եւ ներդրումների ներգրավման ուղղություններով:***

***«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի շրջանակներում է հիմնադրվելու նաեւ «Տեխնոլոգիական եւ նորարարական ՀԱԲ-ը», որը տեղակայվելու է Երեւանի Մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի տարածքում եւ դառնալու է կրթական, հետազոտական եւ զարգացման մասշտաբային ծրագրերի իրականացման հարթակ:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՕԳՈՍՏՈՍ



*9.08.2020 Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց*

Պահքի սկիզբն է, որը նախորդում է Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներից եւ Սուրբ Աստվածածնին նվիրված տոներից մեկին, այսինքն՝ Սուրբ Աստվածածնի վերափոխմանը: Այս պահքը տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

*15.08.2020 Տոն Շողակաթի՝ Սուրբ էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի*

ՖՈՒՏԲՈԼ

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ ՈՒԵՖԱ-Ի ՉԵԶՈՔ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

***Ինչպես ՈՒԵՖԱ-ի հետ կայացած տեսախորհրդատվության ավարտից հետո հայտարարեց Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Դավիթ Մուջիրին, օգոստոսի 9-ին անց է կացվելու եվրոպական մրցաշարերի վիճակահանություն:***

- Երկրների միջեւ տեղաշարժը հիմնախնդրային է: Փուլերը բաղկացած կլինեն մեկ հանդիպումից: Որոշվել է, որ բոլոր հանդիպումները, բացառությամբ՝ Չեմպիոնների լիգայի փլեյ-օֆ-ֆի, կլինեն մեկ հանդիպումային եւ կանցկացվեն առանց հանդիսատեսի,- ասաց Դավիթ Մուջիրին՝ հավելելով, որ, ըստ ՈՒԵՖԱ-ի ծրագրի, եվրոգավաթների հանդիպումների մի մասը հնարավոր է անցկացվի Վրաստանում: ՈՒԵՖԱ-ն ներկայացրել է ճգնաժամային ծրագիր, որի համաձայն, հանդիպումները կանցկացվեն չեզոք պետություններում, որտեղ լավ համավարակաբանական իրավիճակ է: Այդպիսին են չորս երկրներ՝ Կիպրոսը, Հունաստանը, Լեհաստանը եւ Վրաստանը:

## ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

*Շտապ բժշկական օգնություն* - 112
*Պարեկային ոստիկանություն* - 112
*Հրշեջ փրկարար ծառայություն* - 112
*Հրշեջ փրկարար օպերատիվ ծառայություն* - 01, 011, 275-20-85, 241-17-71
*Պահակային ոստիկանություն* - 125
*Գլխավոր տեսչություն* - 126
*Տեղեկատու բյուրո* - 118 08
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - 2-72-22-22
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - 15-05
*ՂազՏրանսԳազ տեղեկատվական ծառայություն* - 114, 240-40-04
*Գազի վթարային ծառայություն* - 04, 274-86-27, 274-89-04
*ԹԵԼԱՍԻ թեժ գիծ* - 277-99-77, 227-45-81
*Ջրամատակարարման թեժ գիծ* - 293-11-11

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏ

## ԲԱԹՈՒՄԻԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԱԾ ԱՄՈՆԻՈՒՄԻ ՍԵԼԻՏՐԱՆ՝ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՀԶՈՐ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՊԱՏՃԱ՞Ռ

***Օգոստոսի 4-ին, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի ծովային նավահանգստի 12-րդ հատվածի պահեստում, որտեղ պահվում էին հրավառության համար նախատեսված պարագաներ, տեղի ունեցավ հզոր պայթյուն:***



Առաջին պայթյունը որոտաց քաղաքային նավահանգստում, տեղական ժամանակով երեկոյան ժամը 18:00-ից հետո: Րոպեներ անց, ավելի մեծ պայթյուն որոտաց, որի հարվածային ալիքը ցնցեց մի քանի կիլոմետր հեռավորությամբ գտնվող շինությունները:

Տեղեկատվության համաձայն՝ Բեյրութի նավահանգստում օգոստոսի 4-ին տեղի ունեցած պայթյունի պատճառ է դարձել 2,75 հազար տոննա սելիտրան, որն ավելի վաղ բռնագրավվել էր առեւտրային նավից: Ինչպես հայտարարել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը՝ Լիբանանի մայրաքաղաքում խոշոր պայթյունի պատճառ դարձած ամոնիումի նիտրատի խոշոր բեռը Վրաստանից դուրս է բերվել մի քանի տարի առաջ: Վրացական կողմի հավաստմամբ՝ սելիտրան, իսկապես, վրացական նավահանգստ Բաթումից՝ հետագայում Մոզամբիկ առաքելու նպատակով, դուրս է բերվել 2013 թ.-ին, Մոլդովայի դրոշի ներքո նավարկող նավով: Նավատիրոջ կողմից մաքսատուրքերը չվճարելու պատճառով բեռի բռնագրավումից հետո՝ քիմիական նյութը, անվտանգության նորմերի խախտմամբ, պահվել է նավահանգստում: Տեղի լրատվամիջոցների պնդմամբ՝ բեռը Լիբանան է բերվել ռուսաստանցի նավատիրոջ պահանջով: Վերջին տեղեկատվությունը հաստատել է նաեւ ռուս կապիտանը:

Լիբանանի նախագահ Միշել Աունին երկրում օգոստոսի 5-ը հայտարարեց սգո օր:

Վերջին տվյալների համաձայն՝ Բեյրութում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվածների թիվը գերազանցել է 154-ը, վիրավորվել է ավելի քան 5 հազար մարդ, հիվանդանոցում ծանր վիճակում գտնվում է 120 մարդ, շուրջ 100 մարդ համարվում է անհայտ կորած: Անօթեւան է մնացել շուրջ 300 հազար մարդ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ՉԵՆ ՏՈՒԳԱՆՎԻ

### ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔ ՆԵՐԿՐԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՔՍԱԶԵՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

***Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, հաշվի առնելով նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված իրավիճակը, հանդես է եկել մի շարք նախաձեռնություններով:***

Մասնավորապես, ՆԳ նախարարի հրամանագրով, Վրաստանի տարածքում գտնվող արտասահմանյան երկրի վարորդական իրավունք ունեցողները չեն տուգանվի: Մինչեւ սահմանների բացումը՝ երկրում ազատ երթեւեկելու իրավունք է վերապահվում նաեւ երկրի տարածքում գտնվելու վավերականության ժամկետը սպառված այլ երկրի քաղաքացիություն ունեցող անձանց:

Եվս մեկ նախաձեռնություն. Ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալության փոխանցմամբ, Վրաստանի կառավարության միջգերատեսչական համակարգող խորհրդի հանձնարարականները հաշվի առնելով եւ ֆինանսների նախարարության որոշմամբ, կորոնավիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումներից ելնելով՝ մինչեւ 2020 թվականի մայիսի 1-ը Վրաստանի տարածք ներկրված տրանսպորտային փոխադրամիջոցների մաքսազերծման ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

«Սպասարկման գործակալությունը կոչ է անում քաղաքացիներին, ովքեր փոխադրամիջոցը Վրաստան են ներկրել մինչեւ 2020 թվականի մայիսի 1-ը, հերթից եւ տուգանային պատժամիջոցներից խուսափելու նպատակով, ժամանակին դիմել սպասարկման գործակալություն եւ մինչեւ օգոստոսի 31-ը ներառյալ, իրականացնել մաքսազերծման գործընթացները»,- նշված է ՆԳՆ-ի սպասարկման գործակալության տեղեկության մեջ:



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ակնկալիք: 7.Փափուկ մետաղ: 8.Խմբակային կրակոց: 11.Անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս ...Նյուտոն: 15.«Ուժը հատած, բայց թոռան հետ նոր ուժ գտած»: 17.Գիտություն ժառանգության մասին: 19.Սպառազեն, հրացանակիր: 21.Բրազիլացի ֆուտբոլիստ: 22.Իտալական ծագումով բելգիացի շանսոնյե Սալվատորե ...: 25.Բուխարեստի լեզուն: 27.Հյուսնի գործիք: 28.Ճապոնական էլեկտրոնիկայի ֆիրմա: 33.Շատախոս երեխա: 34.Բրիտանացի ջութակահարուհի ... Մեյ: 35.Թիվ, խազ: 36.Գետ Ռուսաստանում: 37.Լրագրության հիմնական ժանրերից: 40.Սրճարան: 41.Թմրաքուն: 42.Վրաց Բագրատիոնի տոհմի թագուհի, ում օրոք Վրաց թագավորությունը հասել է հզորության ու ծաղկման գագաթնակետին: 45.Ամենաքաղցրը եւ ամենադառը: 46.Հայոց Բագրատունի տոհմի թագավոր: 47.Արձան: 48.Ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ե'վ քարտ, ե'ւ վիրաբուժության կենտրոն: 3.Ստրուկների ապստամբության առաջնորդ Հին Հռոմում (մ.թ.ա. 74-71թթ.): 4.Ցանի թե: 5.Կարողություն չունեցող: 6.Սպորտային գույք: 9.Զբոսայգի, պուրակ: 10.Գեղեցիկ սեռի ներկայացուցիչ: 12.Կահույքի մաս: 13.Սահմանափակ խելքի տեր մարդ: 14.Կարգ ու ...: 16.Անասունների բուժումով զբաղվող հիմնարկություն: 18.Թռչունների խումբ, տարմ: 20.Կառք վարող: 23.Ֆրանսիացի դերասան Ալեն ...: 24.Երկու տարբեր ցեղերի խաչավորումից առաջ եկած կենդանի կամ բույս: 26.Իրոք, իսկապես: 27.Կանադացի նկարիչ ... Գոնսալվես: 29.Ոչ իրազեկ, անտեղյակ: 30.Քաղաք Իսպանիայում: 31.Նյարդ: 32.Կրակի պեծ (խսկց.): 36.Կտուր: 37.Կիլիկիայի հայ թագավոր: 38.Դեմ-...: 39.Հողատեր, կալվածատեր: 40.Ջովացուցիչ ըմպելիք: 43.Քաղաք Նիգերիայի հարավում, համանուն գետի ափին: 44.Այստեղ (բրբ.):

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վասպուրական: 7.Բայ: 10.Շարական: 12.Այր: 13.Անա: 14.Տրական: 15.Մար: 16.Մկն: 18.Իբր: 20.ԱԻՄ: 21.Այլ: 22.Ուրախալի: 25.Եկա: 26.Թիկն: 27.Ուշ: 29.Նեպալ: 32.Տա: 34.Համ: 35.Սեթ: 36.Սիրտ: 37.Սա: 38.Երաշտ: 39.Պո: 40.Քթոց: 43.Են: 44.Տաղ: 45.Լայնք: 46.Բարիտոն: 48.Որ: 49.Սիգ: 51.Կաշի: 52.Ոստխ: 54.Գիլան: 56.Իտալիա: 57.Իդո: 59.Սավանե: 60.Ակոռի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վռամշապուհ: 2.Սուրմալու: 3.Ուրարտու: 4.Աջարիա: 5.Աշտարակ: 6.Նար: 7.Բակ: 8.Ակամայից: 9.Ցանկի: 11.Րաֆֆի: 17.Ոմանք: 19.Բխել: 23.Րոպե: 24.Լատիշ: 28.Շանթ: 30.Ես: 33.Արտ: 36.Սալբի: 37.Սողոմոն: 39.Պատ: 40.Քորելի: 41.Ոլոք: 42.Ցար: 43.Ենթակա: 44.Տիխոնով: 47.Ագուլիս: 49.Սիգմա: 53.Իլիկ: 55.Ադան: 58.Սեգ:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445